ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆԸ

05 սեպտեմբերի 2016 թվականի N 14-Հ

## ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով, 32-րդ հոդվածի 2-մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ պարբերությամբ, հիմք ընդունելով՝ ՀՀ Կոտայքի մարզի Հանքավանի մոլիբդենի հանքավայրի լրահետախուզման և վերագնահատման արդյունքները <Գոլդեն Օրե> ՍՊԸ-ի կողմից 28.08.2015-ին՝ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալություն ներկայացումը և դրա վերաբերյալ <<Հանքավայրի կոնդիցիաների պարամետրերի և պաշարների հաստատման մասին>> գործակալության 16.12.2015թ-ի թիվ 11 արձանագրությունը, 2015 թվականի դեկտեմբերի 22-ի պետական ընդերքաբանական փորձաքննության թիվ 15 եզրակացությունը, հաշվի առնելով ընկերությանը օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ՇԱԹՎ-29/095 թույլտվության գործողության /2031թ/ ժամկետը, ինչպես նաև հաստատված օգտակար հանածոների պաշարների վերաբերյալ հանքարդյունահանման նախագիծ կազմելու նպատակով <ԳՈԼԴԵՆ ՕՐԵ> ՍՊ ընկերության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ LY-15-12/01 գրությունը՝

*ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ*

1. ՀՀ Կոտայքի մարզի Հանքավանի մոլիբդենի հանքավայրի աշխատանքային նախագիծ կազմելու նպատակով, «ԳՈԼԴԵՆ ՕՐԵ» ՍՊ ընկերության 2012 թվականի սեպտեմբերի 26-ի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-095 պայմանագրի ժամկետը երկարաձգել, սահմանելով՝ մինչև 2016թ-ի դեկտեմբերի 30-ը:

2. Ընդերքի տրամադրման գործակալության պետին.

1) ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-095 պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին.

2) լիազոր մարմնի և ընկերության կողմից պայմանագրի փոփոխությունը վավերացվելուց հետո, 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխությունը:

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխությունը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-095 պայմանագրի ժամկետի երկարաձգման դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. *<Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին* - ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ